

2. Վանն Յովսեփայ թէ արդէս վաճառեցաւ յեղբարցն յԵղիպտոս, Թ. 914 խոր. եւ Թ. 918 ծնը:

3. Կտակ Յովսեփայ նահապետին, Թ. 1714 Կ:

4. Կտակ Յովսեփայ վանն նախանձու, Թ. 922 շշ. եւ Թ. 1714 Կ:

5. Գիրք Յովսեփայ (°) Թ. 159:

6. Պատմութիւն Յովսեփայ եւ կնոջ նորա Ասանեթայ, Թ. 155 եւ 160:

7. Պատմութիւն Ասանեթայ, Թ. 924 շշ:

Եթէ ասանք հետազոտուէին, կարելի էր աւելի լուսատւոր դաղափար ունեցուիլ: Ասկայն կրնանք սպասուիլս թե՛ որ վերջիշեալ շորս անվաւերականք իրարմէ զատ զատ գործեր են: Ասոր կը վիայէ մեր մատենագրանի մէկ ձեռագիրն, որ միայն այս կարգի իրեր կը բովանդակէ:

Այս ձեռագիրն (Թ. 88) գրեալ 1388ին, կը բովանդակէ ի սկզբան եկեղեցականի մը գրութիւնն, որ կը նմանցնէ զՅովսեփ-Քրիստոսի: Կը յաջորդէ Պատմութիւն Յովսեփայ, առանց վերնագրի, այսպէս՝

1. «Այս երանելիս զԸ եւ զԺ ամառ վարեցաւ առաքինութեամբ . . . » եւ կը պատմէ Յովսեփայ պատմութիւնը մինչեւ Յակոբայ Եգիպտոս գալը: Ասոր կը յաջորդէ՝ վերնագրով,

2. «Պատմութիւն Ասանեթի զոր խօսեցաւ: Եւ եղև յամին յառաջնում . . . » կը բովանդակէ Յովսեփայ պատմութիւնն ընդ Ասանեթայ: Ի վերջն՝ «Եւ կատարեցաւ պատմութիւն Ասանեթայ»: Կը յաջորդէ՝

3. «Աւրհնութիւն խոստովանութեան Ասանեթայ: Մեղայ . . . » որ ինք տուն է: Վերջինն է՝ «Մեղայ աէր մեղայ առաջի քո ես հարսն մեծի որդւոյ թագաւորին»: Կը յաջորդէ վերնագրով՝

4. «Այլափոխութիւն: Մինչեւ եկն Յուսէփ զօրաւորն Աստուծոյ . . . » որ կը պատմէ Փարաւոնի որդւոյն դէպքն: Այնուհետեւ

5. Կտակ ԺԲ նահապետայ:

Յայտնի է ուրեմն որ զատ զատ բաներ են Ասանեթի աղօթքն ու պատմութիւնն, Յովսեփայ պատմութիւնն, աղօթքն ու կտակն, որ ԺԲ նահապետայ կտակայ հետ կը գտնուի շատ տեղ:

Ձեռագրին բովանդակութեան 2—4 հրատարակուած է (ԲաղձաՎէղ 1885—6, եւ Քարիէր, N. Mél. or.): Աւելորդ է ըսել՝ որ երկու հրատարակութեանց եւ այլ ձեռագրաց մէջ շատ տարբերութիւնք կան: Այս մասին առիթ կ'ունենանք աւելին ըսելու:

Տ. Գ. Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՐՁԱՆԿՆԵՐՈՒԹԻՒՆ Մ'Ի ՄԱՐՏԵՑԼ

Կ. Պոլիս, Խոսկիւտար 16 Յունիս 1891:


Վերջին անգամ 1889 Յունիս 12ին, Գրանսա ուղեւորած ժամանակս, Մարտէյլն Հնու-իւնացի Բանագրանի գեանայարկի մէկ կողմը

գտած եմ հետեւեալ Հայ Արձանագրութիւնը՝ որ քանդակեալ էր, 22 1/2 հարիւրորդամեզր բարձր, 19 հարիւրորդամեզր լայն, եւ 4 հարիւրորդամեզր թանձր, քառակուսի սեւ մարմարի տն քարի վրայ՝ որ եւ ունէր 27 հարիւրորդամեզր երկայնութեամբ, 7 հարիւրորդամեզր բարձրութեամբ, եւ 8 հարիւրորդամեզր թանձրութեամբ, կրանիտայ գեղեցիկ պատուանդան մը:

Արձանագրութիւնս մաքուր բոլորով է, ամբողջն 8 տող:

Ի թրվին ոճԺբ. մայխի իղ.
Ի քաղաքն յամնդերամ
արդեամիք զաքարի որդւոյ
գաւթի ճիւղայեցւոյ: Եւ
ենթադրութեամբ կարապետի
բանի սպասաւորի կազմեցաւ
վէմն օլլանդիու սուրբ կարապետի
տին

Արձանագրութեան ընդդիմակողման չորս անկիւնները քանդակուած է մէկ մէկ խաչ, եւ ճիշդ կեդրոնն ալ քառաթեւ մը Տէր, Աստուծոյ, Յիսուսի, Քրիստոսի բառերով: Այս խաչերու ճշգրիտ պատկերն այստեղ կը գնենք:



ԽԱԶ ԿՆՆԳՐՈՄԻ



ԽԱԶ ԱՆԿՆԱՅ

Ամնդերամի Հայոց սուրբ կարապետ եկեղեցւոյն համար 1663ին շինեալ այս վէմն՝ ինչպէս Մարտէյլն եկած է, յայտնի չէ բնաւ. թանգարանին շնութեանց ընդարձակ ցուցակը բան մը չի խօսիր, եւ փախագելի է մեզ կարգալ այս մասին, եթէ երբեք ազգային հմուտ հնագէտք ունին կարեւոր անդեկութիւններ:

Ամնդերամի Հայոց եկեղեցին անձամբ չէ սակայն ազգայնոց. այն կանգուն կը մնայ ցայսօր եւ այժմ սեպհականութիւն է օտարին: Ան ի չգոյէ ազգայնոց, բաւական տարի յառաջ, ծախուեցաւ հանգուցեալ Գէորգ կաթուղիկոսին հրամանաւ, եւ այսօր նորատի աղքատ տղայոց դպրոց է: